

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Յասմիկ Աբրահամյան

hasmikabrahamyanihasc@gmail.com

Ծնած է 1982ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուական՝ «Վարդավառը հայոց մէջ (պատմաազգագրական ուսումնասիրութիւն)» նիւթով: 2012էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Էթնոսոցիոլոգիայի բաժինը: Մասնակցած է ազգագրական դաշտային աշխատանքներու՝ Սիւնիքի բնակավայրերու մէջ: Գիտական հետազոտութիւններու ծիրը կ'ընդգրկէ ազգային-եկեղեցական տօնածիսական մշակոյթը, պահքի մշակոյթը: Ունի գիտական յօդուածներ:

Գրիգոր Արշակեան

garshakyan@mail.ru

Ծնած է 1982ին, Երեւան: 2008ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հարաւային Կովկասում Թուրքիայի վարած քաղաքականութիւնը (1991-2001)» նիւթով: 2009-12՝ դասաւանդած է ԵՊՀ միջազգային յարաբերութիւններու եւ դիւանագիտութեան ամբիոնը, իսկ 2010էն ԵՊՀ UNESCOի մարդու իրաւունքներու, ժողովրդավարութեան եւ եւրոպագիտութեան ամբիոնի դասախօս է: 2009 Յունուար-2013 Հոկտեմբեր վարած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան հայրենադարձութեան եւ հետազոտութիւններու բաժինը: 2015ին ստացած է դոցենտի կոչում: 2020ին վարած է ՀՀ Ազգային արխիւի տնօրէնութիւնը:

Հեղինակ է շուրջ երեք տասնեակ գիտական յօդուածներու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Կովկասի եւ շրջանի երկիրներու փոխարաբերութիւնները: 2015էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Կարապետ Աւետեան

maestro434@yahoo.com

Ծնած է 1979ին, Պէյրութ: 2006ին ամառած է Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի ստեղծագործական բաժինի մագիստրականը, իսկ՝ 2007ին արուեստից սիմֆոնիք եւ օփերային նուագավարութեան բաժինը: 2017էն լծուած է թեկնածուականի աշխատանքներուն: 2008էն Լիբանանի Ֆիլիպինոնիք նուագախումբի ղեկավար է, միաժամանակ դասախօս՝ Լիբանանի Պետական համալսարանին, իսկ 2010էն՝ Պէյրութի Արաբական համալսարանին: 2022ին «Պատուոյ վահան»ով պարգեւատրուած է Լիբանանի մշակոյթի նախարարին կողմէ: 2018ին արժանացած է Հունգարիոյ Դանուբի խմբավարական միջազգային 14րդ մրցոյթի եւ վարպետաց դասընթացքի առաջին եւ գլխաւոր մրցանակին:

Ունի յօրինողական ստեղծագործութիւններ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ լիբանահայ երաժշտահան Պօղոս Ճելալեանի ստեղծագործութիւնը:

Նազանի Գասպարեան

gasparyannazani@gmail.com

Ծնած է 1995ին, Շիրակի մարզի Գեղանիստ գիւղը: 2019ին պաշտպանած է «Վան քաղաքի ժողովրդագրական բնութագիրը եւ ազգագրական պատկերը ցեղասպանութեան նախօրէին» թեմայով մագիստրականը: 2019էն կը պաշտօնավարէ Հայաստանի Ազգային արխիւին մէջ որպէս գլխաւոր արխիւագէտ:

Սուրէն Դանիէլեան

spyurksd1948@gmail.com

Ծնած է 1948ին, Երեւան: 1970ին ամառած է ԽԱՀՊՄ համալսարանի բանասիրականը: 1982ին պաշտպանած է թեկնածուական, 1993ին՝ դոկտորական՝ «Սփիւռքահայ Վէպը» նիւթով: 1974էն ԽԱՀՊՄՀի դասախօս է: 1993–2001 դասախօսած է Ս.

Էջմիածնի Գեորգեան հոգեւոր ճեմարանը: 1995-ին ՀՊՄՀի «Սփիւռք» գիտատառմանական կեդրոնի տնօրէնն է. 2000-8 եւ 2017-9 ղեկավարած է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պատուէրով կազմակերպուած սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման դասընթացքները: 2013-էն վարիչն է ՀՊՄՀ Վաչէ Պարտիզունիի անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ անոր դասաւանդման մեթոտիկայի ամբիոնին: Հայաստանի Գրողներու միութեան անդամ է 1993-էն, խմբագրակազմերու անդամ՝ *Վէմ համահայկական հանդէսի*, *Հայագիտական հանդէսի*, *Գարունի*: Պարգևատրուած է ՀՀ ԱԺ նախագահի պատուոգիւրով (2015): Հեղինակ է բազմաթիւ մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Սփիւռքահայ գրականութեան նուաճումները եւ զարգացման միտումները (1920-1960ական թթ.)* (2015): Գիտահետազոտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական հարցադրումները, արեւմտահայ գրամշակութային խնդիրները, արեւմտահայ կրթական ոլորտը: 2012-էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Լիլիթ Զաքարեան

lilitzakaryan66@gmail.com

Ծնած է 1966ին, Երեւան: 1993ին պաշտպանած է թեկնածոական՝ «Սոցիալ-տնտեսական փոփոխութիւնները խորհրդահայ գիւղում 1980ականներին» նիւթով: 2008ին ստացած է դոցենտի կոչում: Աագ գիտաշխատող է ՀԱԱ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի նորագոյն պատմութեան բաժինին մէջ, միաժամանակ տնօրէնն է Հայաստանի Ազգային ագրարային համալսարանի որակի գնահատման եւ ապահովման կեդրոնին: Հեղինակ է մենագրութիւններու, վերջինը՝ *Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերի ձեւաորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետութիւնում* (2018): Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ խորհրդահայ գիւղը, տեղական ինքնակառավարման համակարգը, ՀՀ խորհրդարանի գործունէութիւնը:

Ճան Էրզուրումլուօղլու

canerzurumluoglu@hotmail.com

Ծնած է 1980ին, Պոլիս: 2017ին պաշտպանած է մագիստրոսականը՝ «Une Comparaison Critique de la Conception de L'espace Chez Leibniz et Chez Kant» նիւթով: 2001-10՝ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է պոլսահայ վարժարաններու մէջ, իսկ 2015-էն՝ ուսողութեան դասախօս է Նիշանթաշը համալսարանին մէջ: 2020-էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Արթօ Թաւութեան

arto@designshiva.com

Ծնած է 1958ին, Մոնթրէալ: 1982ին աւարտած է Քոնքորտիա համալսարանի Communication Studies-ի պսակաւոր արուեստից բաժինը: Թաւութեան ինքզինք կը նկարագրէ իբրեւ «որսորդ մը արուեստի արժէքաւոր գործերու, որոնք լրուեցան, երբ հայեր ստիպուեցան փախչիլ Օսմանեան կայսրութենէն՝ 1915ին»: Հաստատած է հայ արուեստին նուիրումը www.hyeantiques.com կայքը: Հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ արուեստն ու հայոց պատմութիւնը: 2022-էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Մանէ Խառատեան

art.phil.maneh@gmail.com

Ծնած է 1985ին, Ալավերդի: Աւարտած է ԵՊՀ փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ֆակուլտէտի մագիստրականը՝ «Ժամանակակից արուեստը՝ որպէս տեխնածին քաղաքակրթութեան երեւոյթ» նիւթով: 2010-18՝ պաշտօնավարած է Կամերային

երաժշտական թատրոնին մէջ, 2020-21՝ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանին մէջ: Յունուար 2021էն Հայաստանի պատմութեան թանգարանի տնօրէնի օգնական է:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ փիլիսոփայութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, հոգեվերլուծութիւնը, բժշկագիտութիւնը, կենսաբանութիւնը, էթնոհոգեբանութիւնը:

Զաւէն Կենազեան

zavenkniasian@yahoo.com.ar

Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Հետեւած է Պուենոս Այրէսի Պետական համալսարանի ճարտարագիտութեան դասընթացքներուն: 1992էն հայ մշակոյթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կրթական հաստատութեան մէջ: Անդամ է Արժանթինի Երաժշտագիտութեան ընկերակցութեան: Հրատարակած է գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն: Վերջին մենագրութիւնը *La Historia Armenia a Través de un Traje*ն է (Հայոց պատմութիւնը տարագի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական երաժշտական գործիքները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վաչէ Ղազարեան

vatcheg@gmail.com

Ծնած է 1954ին, Հալէպ: 1983ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վահան Թէքէեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը» նիւթով: 2002-19՝ պաշտօնավարած է իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, Մոնթրէլ, Քալիֆորնիա, օտար լեզուներու հիմնարկի մէջ: Խմբագրած է հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յուշեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջիններն են *Ազգային պատմութեան գործունէութիւնը 1915-1916* (2017) եւ *Համահաւաք արեւնագրութիւններ Թուրքիոյ հայոց ազգային երեսփոխանական ժողովի, համագումար ազգային ժողովի եւ համազգային խորհուրդի (1919-1922)* հատորը (առցանց հրատ.- <https://mayreni.net/>):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ազգային պատմութիւնը եւ գրականութիւնը, ի մասնաւորի Վահան Թէքէեանը, Արմենական կուսակցութիւնը, Պօղոս Նուպարի գործունէութիւնը, արեւմտահայութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արման Մալոյեան

armanmaloyan1976@gmail.com

Ծնած է 1976ին, Երեւան: 1996ին աւարտած է ԽԱՀՊՄՀի պատմութիւն եւ մանկավարժութիւն բաժինը: 2011ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտեան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրութիւնը ԺԸ. դարի երկրորդ կէտին» նիւթով: 2007-19՝ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մէջ հայագիտական եւ ընկերամշակութային դասանիւթերու բաժնի գլխաւոր մասնագէտ, 2014-19՝ պատասխանատու քարտուղար *Հայագիտութիւնը դպրոցում* ամսագրին, 2021էն՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան «Կրթութեան զարգացման եւ նորարարութիւնների ազգային կենտրոն» հիմնադրամին վերապատրաստման ծրագրերու մշակման եւ վերապատրաստումներու արդիւնաւէտութեան գնահատման բաժնի պետ է: Հեղինակ է գիտական յօդուածներու, նուիրում՝ ԺԸ.-ԺԺ. դարերու Արեւմտեան Հայաստանի վարչատարածքային բաժանումին, առեւտուրին, քաղաքական իրավիճակին, ԺԸ. դարու Պոլիսին, Ուրֆային, Էրզրումին, Կարսին, Տրապիզոնին, Մարտինին:

Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն Հայաստանի ԺԸ.-ԺԹ. դարերու պատմության աղբիւրագիտութիւնը, պատմագրութիւնը, պատմության դասաւանդման խնդիրները, հայ մշակոյթի եւ դպրոցի պատմութիւնը, հայ գաղթավայրերու պատմութիւնը, Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը եւ տեղագրութիւնը: 2016էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Կարէն Մաթեոսեան

karenmatevosian@gmail.com

Ծնած է Երեւան, 1958ին: 1979ին աւարտած է ԽՍՀՄՍՀ պատմութեան ֆակուլտետը: 1989ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «Անի քաղաքի գրչութեան կեդրոնը» նիւթով, 2008ին՝ դոկտորականը՝ «Սամուէլ Անեցու *Ժամանակագրութեան* ձեռագրիրերու աղբիւրագիտական քննութիւն» նիւթով: 2015ին՝ ստացած է պատմութեան պրոֆեսորի կոչում: 1980-2004՝ գիտաշխատող, 1995էն՝ գիտքարտուղար Հայաստանի Ազգային պատկերասրահին: 2005էն իվեր կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը, եղած է գիտաշխատող, բաժնի վարիչ, գիտական գծով փոխտնօրէն (2018-23): Այժմ Մատենադարանի «Արուեստի պատմութեան եւ գրչութեան կեդրոնների ուսումնասիրութեան բաժն»ի վարիչն է: 2019ին պարգեատրուած է Հայ Առաքելական եկեղեցիի «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանով: Հեղինակ է շուրջ հարիւր գիտական յօդուածներու, քսանեակ մը գրքերու, որոնց վերջինը՝ *Անին եւ անեցիները* (2021): Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկէ միջնադարեան Հայաստանի պատմութիւնը, մատենագիտութիւնը, մշակոյթն ու արուեստը, Անիի պատմութիւնն ու մշակոյթն ու շարք մը վանքերու պատմութիւնը, ձեռագրերու գրչութեան արուեստը, յիշատակարանները, մանրանկարչութիւնը: 2004էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վարդան Մատթէոսեան

varny1@yahoo.com

Ծնած է 1964ին, Մոնթէվիտօ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի հայց. առաքելական եկեղեցւոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը: Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն, որոնց վերջինն են *The Politics of Naming the Armenian Genocide: Language, History, and "Medz Yeghern,"* 2022ին, եւ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shamakha,"* 2022ին (Արծուի Բախչինեանի հետ): 2023ին արժանացաւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոս Արամ Ա. վեհափառի «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Աշոտ Մելքոնեան

ashamelk@yahoo.com

Ծնած է 1961ին, Ախալքալաք, Վրաստան: 1989ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտեան Հայաստանի Էրզրումի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19րդ դարի առաջին երեսնամեակին» նիւթով, 2002ին՝ դոկտորականը, «Ջաւախքը 19րդ դարում եւ 20րդ դարի առաջին քառորդին» նիւթով: 1989-95՝ եղած է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի գիտական քարտուղար եւ փոխտնօրէն, 2002էն՝ տնօրէն: 2003ին պարգեատրուած է Մովսէս Խորենացի, Զօրավար Անդրանիկ, ԵՊՀ, 2011ին՝ ԽՍՀՄՍՀի ոսկէ, 2018ին՝ Արցախի նախագահի Վաչագան

Բարեպաշտ եւ այլ մետալներով: Հեղինակ է շուրջ 475 աշխատություններու: Ունի 19 մենագրություն եւ դասագիրք: Վերջին մենագրությունն է *Պարմագիտական հետազոտությունները* (2021):

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի պատմական ժողովրդագրությունը, Հայոց Ցեղասպանութեան պատմությունը, հայ-թրքական յարաբերությունները, Հայաստանի պետականութեան պատմությունը

Վիլեն Մնացականեան

mnatsakanyanvilen@gmail.com

Ծնած է 1998ին, Ռուսաստան: 2023ին մագիստրականը ստացած է Հայ-Ռուսական համալսարանի «Տնտեսութեան պետական կարգաւորում» բաժինէն: Հեղինակ է երկու գիրքի, վերջինը՝ *Ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրայ* (2020):

Աստղիկ Յակոբեան

astghikhakobyan@gmail.com

Ծնած է 1986ին, Շիրակի մարզի Ախուրեան գիւղը: 2010ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի մագիստրականը, 2019ին թեկնածուականը՝ «Իրանահայ համայնքը 1921-1945թթ.» նիւթով: 2011էն կը պաշտօնավարէ Հայաստանի Ազգային արխիւին մէջ, 2021էն դասախօս է ԵՊՀ Իրանագիտութեան ամբիոնին: Հեղինակ է *Իրանի հայ համայնքը 1921-1945 թթ.* մենագրութեան (2022):

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ հայ-իրանական յարաբերությունները եւ հայրենադարձությունը, 1894-95ի հայկական կոտորածները, Հայաստանի օգնութեան կոմիտէն, ֆրանսահայ դիմադրական շարժումը:

Վահրամ Շեմմասեան

vahram.shemmajian@csun.edu

Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Armenian Villagers of Musa Dag: A Historical-Ethnographic Study, 1840-1915» նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժին: Ունի բազմաթիւ յօդուածներ եւ Մուսա Լեռան բնակչութեան նուիրուած մենագրություններ, վերջինը՝ *The Armenians of Musa Dag: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգետնատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիլմ Սարոյեան շքանշանով (2010): Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատություններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Յակոբ Զոլաքեան

hagopcholakian@hotmail.com

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին պաշտպանած է դոկտորականը՝ «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնա-սիրություն)» նիւթով: 2014էն ՀՀ ԳԱԱ ՀԱԻի գլխաւոր գիտաշխատող է: 54 տարի աշխատած է իբրեւ հայերէնի ուսուցիչ եւ դասախօս: Հեղինակ է հայերէնի դասագիրքերու, գիտական յօդուածներու եւ ազգագրական, բանագիտական, պատմագիտական եւ լեզուաբանական հատորներու, որոնց վերջինը՝ *Պարմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականությունները* (2023):

Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն Անտիոքի շրջանի հայոց պատմությունը, ազգագրությունը, բանահիւսությունը, բարբառը, արեւմտահայերէնը, Սփիւռքի կրթական վիճակը: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արամ Պալեան**araratinfo@gmail.com**

Ծնած է 1977ին, Գիւմրի: 1999ին ստացած է մագիստրականը Թունուզի էլՄանար համալսարանի տնտեսագիտութեան եւ կառավարման ֆակուլտետէն: 2015էն *էթնո-գենեզիկա* դիմատետրային խումբի ղեկավարն է, իսկ 2020էն՝ նաեւ Ethnogenesis of Armenians/Этногенез армян դիմատետրային խումբին կառավարիչը: Հրատարակած է *Խաղաղապահներ. տեղեկագրական փաթեթ* հատորը (2007): 2004-7՝ եղած է խմբագիր Genocide.ru կայքին:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հնածինագիտութիւնը, հնագիտութիւնը, հայագիտութիւնը, հասարակագիտութիւնն ու տնտեսագիտութիւնը:

Արմէն Պետրոսեան**alpehit@gmail.com**

Ծնած է 1948ին, Երեւան: 1977ին աւարտած է ԵՊՀ կենսաբանութեան ֆակուլտէը: 1996ին պաշտպանած է թեկնածուականը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտին մէջ՝ «Արամի առասպելը հայ աւանդութեան մէջ» նիւթով: 2000ին պաշտպանած է դոկտորականը: Ներկայիս գլխաւոր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ բանահիւսութեան տեսութեան եւ պատմութեան բաժինին մէջ: Աշխատակցած է *Հայ սովետական* եւ *Ինչ է, ո՞վ է. մանկական* հանրագիտարաններուն: 1984էն կը զբաղի հայոց ազգածագման հարցերով ու կը պաշտպանէ հայ ազգածագման էթնունեան վարկածը: Հեղինակ է մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայկական էպոսի հնագոյն ակունքները 2* (2020):

Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ եւ հնդեւրոպական առասպելաբանութիւնը, հայ-հնդկական, հայ-լուսնական, հայ-հռոմէական եւ հայ-կովկասեան առասպելաբանական առնչութիւնները, հայ հեթանոսական եւ ուրատական դիցարանը, հայ ժողովուրդի նախապատմութիւնն ու նախալեզուն, վիշապ քարակոյտները: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արամ Սաֆարեան**aramsafaryan@yahoo.com**

Ծնած է 1962ին, Երեւան: 2005ին պաշտպանած է թեկնածուական՝ ԵՊՀ պատմութեան ֆակուլտետին մէջ, «Հայ գրահրատարակչական գործը Ռուսաստանում ԺԹ.դ. 2րդ կէսին» նիւթով: 2019ին ստացած է քաղաքագիտութեան դոցենտի աստիճան: Այժմ ԵՊՀ Ռուսաստանեան հետազոտութիւնների կեդրոնի տնօրէնն է: 1993-95՝ եղած է ՀՀ ԱԳՆ առաջին մամուլի խօսնակ, 1996-97՝ Իրանի Իսլամական Հանրապետութեան մօտ ՀՀ դեսպանի խորհրդական, 1999-2006՝ Հայկական երկրորդ հեռուստաալիքի փոխտնօրէն, հասարակական քաղաքական հաղորդումներու գլխաւոր խմբագիր, 2007-12՝ խորհրդարանի «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան անդամ, 2012էն՝ «Ինտելեկտուալ եւ զարգացում» հետազոտական վերլուծութեան ՀԿի նախագահն է: Հեղինակն է *Հայ գրահրատարակչական գործը Ռուսաստանում 19րդ դ. երկրորդ կէսին* մենագրութեան (2017): 2012ին պարգևատրուած է ՀՀ խորհրդարանի պատուոյ մետալով, 2014ին՝ ՌԴ նախագահ Վ. Պուտինի հրամանագրով «Բարեկամութիւն» շքանշանով, 2019ին՝ «ԵԱՏՄ զարգացման գործում ներդրած աւանդի համար» միջպետական մետալով:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ եւրասիական տնտեսական միութիւնը եւ Հայաստանի տնտեսական համարկումը ԵԱՏՄին, նաեւ՝ Հարաւային Կովկասի եւ յարակից շրջաններու քաղաքական գործընթացները:

Արփի Վարդումեան**avardumyan8@gmail.com**

Ծնած է 1948ին, Երեւան: 1972ին աւարտած է Կոմիտասի անուան Երեւանի պետական կոնսերվատորիայի երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան բաժինը: Այժմ գիտաշխատող է Մատենադարանի արուեստի պատմութեան եւ գրչութեան կեդրոններու ուսումնասիրութեան բաժինին մէջ: 1998էն անդամ է Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագէտների միութեան: Հրատարակութեան պատրաստած է հայր Ղեւոնդ Տայեանի բազմահատոր *Շարակնոցի*, Ա. հատորը, նաեւ՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի «Մատենա երաժշտականութեան» ծաւալուն ձեռագրի բնագիրը:

Գիտաուսումնական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան շարականները: 2013էն կ'աշխատակցի Հայկազեան հայագիտական հանդէսին:

Վանիկ Վիրաբեան

vanik.virabyan@mail.ru

Ծնած է 1959ին, Չարդախլու-Խաչիսար: 2008ին պաշտպանած է դոկտորական՝ «Հայաստանի Առաջին Հանրապետութեան պետական անվտանգութեան համակարգի ստեղծումը եւ գործունէութիւնը 1918-1920թթ.» նիւթով: 2012ին ստացած է փրոֆեսորի կոչում: 2014էն կը դասաւանդէ ԽԱՀՊՄՀի հայոց պատմութեան ամբիոնը: Պարգևատրուած է շարք մը պատուոգրերով: Հեղինակ է ուսումնասիրական յօդուածներու, գիրքերու, վերջինը՝ *Տիգրան Դեոյեանցի հեղախուզական գործունէութիւնը* (2018):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ՀՀ պետական անվտանգութեան համակարգի պատմութիւնը եւ անոր պատմաքաղաքական զարգացումները, հայկական հետախուզութիւնը եւ բանակը, հայ-վրացական յարաբերութիւնները, հայոց պատմութեան նորագոյն շրջանի հիմնախնդիրները, պատմաքաղաքական կարեւորագոյն իրադարձութիւններու եւ տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներու գործընթացներու պատմութեան պատմաքննութիւնը, Հայաստանը Ի. դարուն եւն.: 2021էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Մուշեղ Տոնոյեան

mushotonoyan0440@gmail.com

Ծնած է 2003ին, Երեւան: 2021էն կը յաճախէ ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետը. որուն 3րդ դասարանի ուսանող է: Մանկութենէն առնչուած է ռէփին. առաջին ռէփ երգերը հրապարակած է 2020ին, կը գրէ նաեւ բանաստեղծութիւններ:

Ջաքար Քէշիշեան

kamilazakar@yahoo.com

Ծնած է 1968ին, Այնճար: Ուսանած է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը, խորանալով ժողովրդական նուագարաններու եւ խմբավարական բաժիններուն մէջ: 1999ին պաշտպանած է թեկնածուական: Դասաւանդած է Լիբանանի Պետական բարձրագոյն երաժշտանոցի, Հայկազեան համալսարանի, Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճին մէջ: Վարած է խմբավարութիւնը *Պէյրուօ չենց - Էսիսթենա*, Արցախի Վարանդա մանկական, պատանեկան եւ երիտասարդական պետական երգախումբերուն: 2022էն ատենապետն է Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան կեդրոնական վարչութեան, 2022էն Լիբանանի հայոց թեմի ազգային երեսփոխան է: Պարգևատրուած է «Վաչագան Բարեպաշտ» նախագահական շքանշանով (2002), Շուշիի պատուաւոր քաղաքացի է (2004), արժանացած է «Եղիշէ» համահայկական մշակութային մրցանակին (2005), 2016ին ստացած է «Արցախի Հանրապետութեան մշակութային վաստակաւոր գործիչ»ի յուշամետալը: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին: